ՄԻ՛ ՀԱԻԱՏԱՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐՄԻԻԵԱՆԻ

Մի՛ հաւատար դու ծիծաղկոտ կեանքի խաղաղ վայելքին,
Ցաճախ փայլուն կեղծ դիմակ է շողում նորա չար դէմքին.
Որպէս երազ, յանկարծ տեսար, այդ վայելքը խաբուսիկ
Օդը ցնդեց—և քեզ նորից ճնշեց կեանքի փոթորիկ։

Թող քո առաջ կեանքը բանայ հրապուրիչ մի աշխարհ,
Ուր վայելես դու լիառատ օրեր քաղցր ու պայծառ.
Թող կախարդէ նա քո ուշքը երջանկութեան տաղերով,
Թող խոստանայ նա յարատև քեզ մի վիճակ անվրդով...

Դու մի՛ խաբուիր, մի՛ հաւատար այդ վայելքին հեշտութեամբ
Եւ կաց զինուած միշտ կեանքի մէջ հոգոյդ բոլո՛ր զօրութեամբ.
Զինուի՛ր տոկուն կամքի ուժով զինուի՛ր սրտով քաջայաղթ,
Որ և՛ կեանքի փոթորկի դէմ դու մարտնչես անվհատ։

Դու շատ անգամ հոգս ու վշտից ուժասպառ և վաստակած
Կեանքի ծոցում քեզ կը գտնես տնդորրութիւն քո խնդրած.
Սակայն երբէք մի՛ մոռանար, որ այդ հանգիստը կեանքի
Իւր մէջ գաղտուկ պահած ունի և՛ փոթորիկ տանջանքի։

Այդպէս երբեմն և՛ լողորդին խաղաղ ծովը ժպտալով,
Խոստանում է նորան հասցնել նաւահանգիստն անխռով.
Սակայն որքան դու ալիքներ մրրկածուփ, փրփրագէ՛զ
Լուռ պահում է նա իւր կրծքում աչքից ծածուկ ու անտես...

Մոսկուա. 10 յունիսի 1890 թ.։